ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

25-Ա/2 06.06.2019

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1015.01.5 «ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 1015.01.01.5 «ՄԱՍՆԱԳԵՏ՝ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴՈՒԱԼ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. մարտի 22-ի N 333-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1320-Ա/Ք հրամանը և ՀՀ ԿԳ նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկի կողմից ներկայացված փորձագիտական դրական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 1015.01.5 «Զբոսաշրջություն» մասնագիտության 1015.01.01.5 «Մասնագետ՝ զբոսաշրջային ծառայությունների» որակավորմամբ փորձարարական դուալ ուսուցման համակարգի ուսումնական պլանը և մոդուլային ուսուցման ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 2018/2019 ուսումնական տարվանից փորձարարական դուալ ուսուցման համակարգի ներդրման մասին» թիվ 1401-Ա/2 հրամանի հավելված 1-ով

հաստատված «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն Արթուր Ղազարյանին՝ միջին մասնագիտական կրթության 1015.01.5 «Զբոսաշրջություն» մասնագիտության 1015.01.01.5 «Մասնագետ՝ զբոսաշրջային ծառայությունների» որակավորման դուալ ուսուցումը կազմակերպել սույն հրամանի հավելվածով հաստատված ուսումնական պլանին և մոդուլային ծրագրերին համապատասխան:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Գրիշա Թամրազյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Invalid signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378